



California's protection & advocacy system

Ինչպե՞ս արձագանքել SLS-ի մերժման հիմնական պատճառներին և ի՞նչ հարցնել SLS տրամադրող պոտենցիալ գործակալություններից

Օգոստոս 2018թ., Հրատ. #7133.10 - Armenian

Ապրելուն աջակցող ծառայությունները (այսուհետ նաև՝ SLS) օգնում են հաշմանդամություն ունեցող մարդկանց, որպեսզի նրանք կարողանան ապրել իրենց սեփական տանը կամ բնակարանում: SLS-ը հաշմանդամություն ունեցող մարդկանց թույլ է տալիս ունենալ այն ծառայությունները, որոնք բավարարում են նրանց յուրահատուկ կարիքները:

Օրենքը փոխվել է 2011թ.-ին [Բյուջեի կատարմանը կից օրինագծի շրջանակում](#): Այժմ կան մի խումբ հարցեր, որոնց դուք և ձեր IPP-ի թիմը պետք է պատասխանեք SLS ստանալու համար: Այդ հարցերը կօգնեն ձեզ որոշել, թե որ տեսակի ծառայությունները կարող են ձեզ անհրաժեշտ լինել: Այդ հարցերը պարունակող ձևաթուղթը կարելի է գտնել DDS-ի կայքէջում՝ [հետևյալ հղումով](#), http://www.dds.ca.gov/SLS/docs/DDS_SLS_StdAssmtQuestionnaire.pdf:

SLS-ի և օրենքի փոփոխությունների մասին մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Չափահասների և երեխաների կացարանային պայմանների համար «Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքների» Գլուխ 7-ը [այստեղ](#)՝ <https://www.disabilityrightscalifornia.org/publications/intellectual-developmental-disabilities/rights-under-the-lanterman-act-manual-rula>:

**Ի՞նչ ծառայություններ կարող եմ ստանալ SLS-ի միջոցով:
SLS-ի յուրաքանչյուր պլանը տարբեր է առանձին անձանց
համար: Սակայն ստորև ներկայացնում ենք աջակցության
օրինակներ, որոնք կարող եք ստանալ SLS ունենալու դեպքում.**

- Սովորական առօրյա գործեր տունը մաքուր և անվտանգ պահելու համար,
- Օգնել ձեր անձնական հիգիենայի և խնամքի հարցում,
- Օգնել ձեզ դուրս գալ ձեր տան հարևանությամբ գտնվող շրջակայք և մասնակից լինել համայնքային կյանքին,
- Ծանոթանալ նոր մարդկանց հետ,
- Ձեռք բերել հմտություններ, որպեսզի կարողանաք աշխատել

Օրենքում թվարկված չեն այն բոլոր ծառայությունները, որոնք կարող է տրամադրել SLS-ը: Քանի որ ենթադրվում է, որ SLS-ը կփոխվի ձեր կարիքների փոփոխության հետ միասին:

Ո՞վ կարող է ստանալ SLS:

SLS ստանալու համար դուք պետք է լինեք առնվազն 18 տարեկան, դիմեք SLS ստանալու համար ձեր IPP հանդիպման ժամանակ և ապրեք տանը կամ բնակարանում:¹

¹ Կալիֆոռնիայի Կանոնագիրք, հոդված 17, § 58613(a)(1): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\):](#)

Ինչ տեղի կունենա, եթե տարածաշրջանային կենտրոնն ասի ոչ:

Որոշ տարածաշրջանային կենտրոններ մարդկանց համար դժվարացրել են SLS-ի ստացումը: Ստորև ներկայացնում ենք տարածաշրջանային կենտրոնների մերժումներին արձագանքելու մի քանի ձևեր:

1. SLS-ը նախատեսված չէ այն մարդկանց համար, ավքեր ունեն ծառայությունների կարիքը օրական 24 ժամ:

Գոյություն չունի այնպիսի օրենք, որն ասում է, որ դուք չեք կարող ստանալ SLS, եթե ձեզ անհրաժեշտ են ծառայությունները օրական 24 ժամ: SLS-ի մերժումն այս հիմքով խախտում է օրենքի նպատակը: ²

Մի գործով դատավորը հաստատեց 24 ժամով SLS-ի ստացումը: Դատավորն ասաց, որ տվյալ անձը կարող է ստանալ SLS «այնքան հաճախ և այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ լինի»:³

2. Ձեր կարիքները խիստ ծանր են:

Տարածաշրջանային կենտրոնները չեն կարող մերժել ձեր SLS-ը ձեր հաշմանդամության աստիճանի ծանրության պատճառով: Ենթադրվում է, որ SLS-ը պետք է սպասարկի ձեր առանձնահատուկ կարիքները: Չկան նաև ձեր SLS ծառայությունների արժեքի սահմանափակումներ:

² Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության մասին օրենքի § 4689(a)(8), Կալիֆորնիայի Կանոնագիրք, հոդված 17 § 58613(b):
– [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#):

³ «Կարլ Բ.-ն ընդդեմ Ալտա Կալիֆորնիա տարածաշրջանային կենտրոնի» գործում, OAH գործ թիվ 2012040640, 20-ը փետրվարի, 2013թ.:
– [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#).

Սակայն ծառայություններն ու աջակցությունը պետք է լինեն «ծախսային առումով արդյունավետ»:

Ծախսային արդյունավետության մասին մանրամասն տեղեկությունների համար կարդա՝ Լանթերմանի օրենքի գլուխ 7-ը:

3. SLS-ը չափազանց թանկ է ձեզ համար:

SLS-ը պետք է լինի ծախսային առումով արդյունավետ, սակայն ծառայությունները պետք է բավարարեն ձեր կարիքները: Ծախսը չի կարող լինել միակ գործոնը: Ծառայությունների որակը և ձեր նախընտրությունները նույնպես պետք է հաշվի առնվեն: Այն մասին, թե ինչն է համարվում «ծախսային առումով արդյունավետ», մանրամասն կարևոր տեղեկություններ ստանալու համար կարդա՝ Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքներ փաստաթղթի գլուխ 7-ը:

4. SLS-ը ձեզ համար չէ, եթե դուք ի վիճակի չեք ինքնուրույն կառավարելու ձեր սեփական խնամքը:

SLS-ից օգտվող մարդիկ իրավունք ունեն կատարելու իրենց սեփական ընտրությունները և կառավարելու իրենց սեփական խնամքը: Այս իրավունքները չեն ավելացնում լրացուցիչ պահանջներ SLS ստանալու համար: SLS-ից օգտվող որևէ անձ կարող է ընտրել օգտվել իրավունքների մի մասից և չօգտվել մյուսներից, օրինակ՝ ինչ հագուստ հագնել կամ որ ընկերների հետ հանդիպել: Դուք կարող եք ստանալ օգնություն այս ընտրությունների և իրավունքների հարցում:

5. Խմբային տունն ավելի լավ կլինի ձեզ համար:

Անհատական կարիքներից ելնելով՝ ոմանց համար խմբային տունն ամենալավ ընտրությունը չէ: SLS-ը թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող մարդկանց ունենալ տուն այնպիսի ծառայություններով, որոնք բխում են նրանց անհատական կարիքներից: Դուք կարող եք ստանալ ծառայությունները խմբային տանը, սակայն դա այլ է, քան ձեր սեփական տունն ունենալը:

6. Դուք պատրաստ չեք ապրել ինքնուրույն SLS-ով:

Որոշումն այն մասին, թե արդյոք դուք «պատրաստ եք» ապրել ձեր սեփական տանը, չի կայացնում տարածաշրջանային կենտրոնը: Դուք եք որոշում, թե արդյոք դուք պատրաստ եք: Որոշելու համար կարող եք մտքերով փոխանակվել նաև ձեր ընտանիքի անդամների հետ: Եթե կան այնպիսի հմտություններ, որոնք դուք ցանկանում եք ձեռք բերել կամ որոնք ձեզ անհրաժեշտ են, կարող եք սովորել դրանք SLS ստանալու ժամանակ: Դուք կարող եք աշխատել նաև որևէ ծրագրի կողմից տրամադրվող ձեր սպասարկողի հետ, ով կօգնի ձեզ պատրաստվել և պատրաստ լինել ձեր տանն ապրելու համար:

7. SLS-ի համար դիմում են ծնողը կամ խնամակալը, այլ ոչ շահառուն:

Դուք այն միակը չեք, ով կարող է դիմել SLS-ի համար: Մեկ ուրիշը կարող է դիմել ձեզ համար: Շահառուն կարող է դիմել SLS-ի համար անմիջականորեն կամ մեկ այլ անձի միջոցով:

8. Դուք չեք կարող ստանալ SLS, եթե ապրում եք ընտանիքի որևէ անդամի հետ:

Այո, դուք կարող եք ստանալ SLS միայն այն դեպքում, եթե բնակվում եք ձեզ սեփականությամբ կամ լիզինգով պատկանող տանը: Եթե դուք ապրում եք ընտանիքի անդամի հետ, դուք չեք կարող ստանալ այն ծառայությունները, որոնք կոչվում են «SLS»: Սակայն տարածաշրջանային կենտրոնն այնուամենայնիվ պետք է տրամադրի

նույն տեսակի աջակցություն, որն առաջարկվում է SLS-ի միջոցով:⁴ Տարածաշրջանային կենտրոնն այդ ծառայությունների համար պետք է օգտագործի մեկ այլ անվանում: Դրանք կարող են կոչվել ուղեկցողի ծառայություններ, անկախ ապրելակերպի օգնության ծառայություններ կամ այլ տեսակի ծառայություններ՝ կախված ձեր կարիքից:

9. Դուք պետք է ունենաք սենյակային հարևան

SLS ստանալու համար պարտադիր չէ ունենալ սենյակային հարևան: Սենյակային հարևան ունենալու մասին մանրամասն տեղեկությունների համար կարդա՝ Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքներ փաստաթղթի գլուխ 7-ը:

10. SLS-ը չի առաջարկվում տվյալ տարածքում:

⁴ «*J.K.-ն ընդդեմ OAH-ի*» գործում Կալիֆորնիայի վճռաբեկ դատարանը որոշեց, որ տարածաշրջանային կենտրոնը կարող է մերժել SLS-ի դիմումը, քանի որ շահառուն ապրում էր ծնողի հետ: Սակայն դատարանը նաև որոշեց, որ շահառուն կարող է ստանալ ծառայություններն ու աջակցությունը, որոնք նման են SLS-ին, անգամ եթե նա ապրում է տանը ծնողի հետ: Պետք է նշել, որ դատարանի որոշումը հրապարակված չէ, ինչը նշանակում է, որ այլ դատարանները չպետք է կայացնեն նույն որոշումը նմանատիպ գործերի համար: *J.K.-ն ընդդեմ Լսումների վարչական գրասենյակի*, թիվ E038673, 2006 WL 763675, *1-ում (Կալ. վճռաբեկ դատարան 24-ը մարտի 2006թ.):

– [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\):](#)

Օրենքն ասում է, որ տարածաշրջանային կենտրոնները պետք է առաջարկեն SLS-ին նման ծառայություններ ձեր համայնքում:⁵ Տարածաշրջանային կենտրոնները նաև պետք է տրամադրեն ձեզ անհրաժեշտ ծառայությունները: Եթե տարածաշրջանային կենտրոնն ասում է ոչ կամ չի կարող տրամադրել ծառայությունները, դուք կարող եք բողոքարկել որոշումը: Տարածաշրջանային կենտրոնի որոշման բողոքարկման մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Լանթերմանի օրենքով սահմանվող իրավունքները փաստաթղթի գլուխ 12-ը. Տարածայնություններ տարածաշրջանային կենտրոնների և զարգացման կենտրոնների հետ, տե՛ս [այստեղ՝ https://www.disabilityrightsca.org/publications/intellectual-developmental-disabilities/rights-under-the-lanternman-act-manual-rula:](https://www.disabilityrightsca.org/publications/intellectual-developmental-disabilities/rights-under-the-lanternman-act-manual-rula)

11. Տարածքային կենտրոնը ցանկանում է փոխել ձեր SLS-ը:

Եթե ձեր տարածաշրջանային կենտրոնը ցանկանում է փոխել ձեր SLS-ը, ապա նրանք պետք է կատարեն հետևյալ երկու բանը.

1. Անցկացնել IPP հանդիպում, սակայն դուք պետք է համաձայն լինեք փոփոխության հետ, կամ
2. Ուղարկել ձեզ գրավոր ծանուցում:

Տարածաշրջանային կենտրոնը պետք է ձեզ ուղարկի ծանուցումը փոփոխությունն սկսվելուց 30 օր առաջ: Ծանուցումը պետք է ձեզ տրամադրի հետևյալ տեղեկատվությունը.

1. Տարածաշրջանային կենտրոնի կողմից ձեռնարկվող գործողությունը,

⁵ § 4648(a)(1): – ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#)).

2. Ձեռնարկվող գործողության պատճառը,
3. Երբ է փոփոխությունն սկսվում և
4. Օրենքը, որով թույլատրվում է տվյալ փոփոխությունը:

Եթե դուք համաձայն չեք տարածաշրջանային կենտրոնի հետ և ցանկանում եք, որ ձեր ծառայությունները մնան նույնը մինչև լսումները, դուք պետք է դիմեք անկողմնակալ լսումների համար՝ ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Հակառակ դեպքում դուք պետք է բողոքարկեք 30 օրվա ընթացքում:

SLS գործակալության ընտրություն – Հարցեր, որոնք պետք է տալ SLS գործակալություն ընտրելիս:

(համաձայնեցված է Զարգացման հաշմանդամությունների նահանգային խորհրդի, նախկինում՝ Տարածքային խորհուրդ 4, թույլտվության հետ)

Լավ լուրեր ունեք. ձեր տարածաշրջանային կենտրոնը հաստատել է SLS-ի ձեր դիմումը: Այժմ ներկայացնում ենք այն հարցերը, որոնք կարող եք տալ ապրելուն աջակցող ծառայությունների գործակալություն ընտրելիս: Այս հարցերը կարող են օգնել ձեզ որոշել, թե որ գործակալությունը կտրամադրի ձեզ անհրաժեշտ աջակցությունը:

Գործակալության մասին.

1. Ի՞նչպես եք օգնելու ինձ, որ ես ապրեմ իմ սեփական տանը:
2. Ի՞նչ ծառայություններ եք դուք մատուցում:
3. Որքա՞ն ժամանակ կպահանջվի ձեզնից, մինչև սկսեք աշխատել ինձ հետ:

Անձնակազմի մասին.

1. Ո՞վքեր են այն մարդիկ, ովքեր օգնելու են ինձ:
2. Կարո՞ղ եմ ընտրել այն մարդկանց, ովքեր ցանկանում եմ, որ աշխատեն ինձ հետ:

3. Եթե ես ունենամ օգնության կարիք գիշերը կամ հանգստյան օրերին, ու՞մ պետք է զանգահարեմ:

Ներգրավվածություն համայնքում.

1. Ի՞նչպես կարող եք օգնել ինձ դառնալ իմ համայնքի մասնակիցը:
2. Ես սիրում եմ տարբեր բաներով զբաղվել (օրինակ՝ պարել, պահել կենդանիներ): Ի՞նչպես կարող եք օգնել ինձ անել դրանք:

Ակնկալիքներ.

1. Դուք երբևէ դադարեցրե՞լ եք ծառայությունների մատուցումը որևէ մեկի համար: Ինչու՞ :
2. Ի՞նչ եք դուք ակնկալում ինձնից:

Կապ այլ մարդկանց հետ.

1. Քանի՞ այլ մարդու է օգնություն ցուցաբերում ձեր գործակալությունը:
2. Կարո՞ղ եք ինձ տալ ձեր կողմից օգնություն ստացած այլ մարդկանց անուններն ու հեռախոսահամարները, որպեսզի ես կարողանամ խոսել նրանց հետ:

Եզրակացություն.

1. Կա՞ որևէ այլ բան, որ ես պետք է իմանամ ձեր գործակալության մասին:
2. Կա՞ որևէ այլ բան, որ ձեզ անհրաժեշտ է իմանալ իմ մասին:
3. Որքա՞ն ժամանակ կպահանջվի ձեզնից որոշել, թե արդյոք կարող եք աշխատել ինձ հետ:

Հանդիպումից հետո.

1. Ի՞նչը ձեզ դուր եկավ գործակալության վերաբերյալ:
2. Ի՞նչը ձեզ դուր չեկավ գործակալության վերաբերյալ:
3. Արդյո՞ք ձեզ դուր եկան այն մարդիկ, ում հետ խոսեցիք:
4. Ունե՞ք այլ հարցեր, որ կցանկանայիք տալ նրանց:

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>: